

զում աշխատութեամբ ի յայս չափս հասուց աշաւթիւք ձերովք , եւ
գութ որպէս վայել է ձեր արբուծեանդ այնպէս ընդունիք :

« Եւ այլ յիշեցէք զաղայ հասակ մանուկն զՅովսեփոսն , որ աւղնու-
թիւն արար ինձ ի շարեւն գրին , եւ է՝ երկոտասան ամեա՝ մանուկ ,
զոր տէր Աստուած զինքն անփորձ պահէ ի վերա երկրի , ամէն :

Դարձեալ աղաչեմ յիշել զճարանտացի մահտեսի Աստուածատուրն ,
որ բազում օգնութիւն արար ինձ ի սրբագրելն եւ յստուգաբանելն , զոր
տէր Ած տացէ զփոխարէնն աստ եւ ի հանդերձեալն , ամէն : Ի տպա-
գրատունն Սալիգաթաու , վերջ » :

Ծանօթ . — Կըլսենք թէ Անկիւրացիի այս սաղմոսէն մէյ մէկ օրի-
նակ կը գտնուին , ի Մատենադարանի Մխիթարեանց Վենետիկոյ
եւ Վիեննայի :

6. ՔՆՆՈՒԹԻՒՆ ՍՐՏԻ . — (Ա Տպգր .)

(Տպագրեալ ի Վենետիկ . ի տպարանի Սալազաթայի :)

Ծանօթ . — (Տես Մատենադիտութիւն , տիպ Վենետիկ 1883, ուր երես
7½ կ'ըսուի .) « Վեց տպագրութեան թերթերով ձեւացած տետրակ
մը , առանց ճակատի եւ թուականի , որով եւ հրատարակութեան
քաղաքն ալ անյայտ : Հաւանականաբար Վենետիկոյ հին տպագրու-
թիւն մըն է , եւ գրերն ալ միջակ , ըստ դաղափափաց Յովհաննու
Անկիւրացու յն » :

ԿԱՊԵՏ



ՈՍԼ ԲԱՂՅԱՆՔ



Ո՞հ ես կուգեմ ոգի մ'ըլլալ ,
Ալիքներու մէջ սուղուիլ ,
Ազատ թռչնոյ թեւ ունենալ ,
Դէ՛պի անհո՛ւն սաւառնիլ :

Ես կը բաղձամ ալիք մ'ըլլալ ,
Ժայռերու գէմ մարտնչել ,
Գերբջնական ոյժ մը ըլլալ ,
Կեանքի խորհուրդը պարզել :

Գտնել բոյնը հսկայ վշտին ,
Տանջող որդը մարդկութեան ,
Ու կատաղի թափով մ'ուժգորն ,
Ոչնչացնել յաւիտեա՛ն . . .

Բարիչ

Օր . Զ . ԱԼԵԱՆԱՎ